Արձանագրություն N 2
<<ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/42>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16.12.2015 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սարգսյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Քոչարյանը, Մ. Սարգսյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ավետիսյանը:

1.Բանակցային ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Սարգսյանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Բանակցային ընթացակարգի հայտ է ներկայացրել <<Արման-Թաման>> ՍՊԸ-ն, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ, հեռ. 094 772291;

բ) Մասնակցի կողմից ներկայացրած հայտ պարունակող ծրարը համապատասխանում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով և կարգով սահմանված պահանջներին,

գ) հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերն են առկա Մասնակցի կողմից ներկայացրած հայտում,

դ) Մասնակցի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը կազմված են ընթացակարգի հրավերին համապատասխան,

ե) ընթացակարգի հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել,

զ) Մասնակցի կողմից առաջարկած գինը հետևյալն է.

ՀՀ դրամ

Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
<<Արման-Թաման>> ՍՊԸ	650000	65000	-	715000

2.Բանակցային ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Ա. Սարգսյանց)

2.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովի որոշեց հաստատել բանակցային ընթացակարգի հայտի գնահատման արդյունքը.

հ/հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Արման-Թաման>> ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

3. Գների նվազեցման համար բանակցությունների տևողություն սահմանելու մասին

(Ա. Սարգսյանց)

3.1 <<ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/42>> ծածկագրով բանակցային ընթացակարգի <<Բավարար>> գնահատված մասնակցի կողմից առաջարկած գնի նվազեցման հնարավորության վերաբերյալ բանակցությունների համար սահմանել 10 րոպե ժամանակահատված,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

4. Մասնակցի հետ վարած բանակցությունների արդյունքների մասին

(Ա. Սարգսյանց)

4.1. Ընդունել ի գիտություն, որ <<ՔՆ-ԲՀԱՀԾՁԲ-15/41>> ծածկագրով բանակցային ընթացակարգի՝ Մասնակցի առաջարկած գնի նվազեցման հնարավորության վերաբերյալ բանակցությունների համար գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված 10 րոպե ժամանակահատվածում Մասնակցի կողմից գնային առաջարկի նվազեցման վերաբերյալ նոր առաջարկություն չի եղել:

5. <<ՔՆ-ԲՀԱՀԾՁԲ-15/42>> ծածկագրով բանակցային ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ա. Սարգսյանց)

5.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 2 կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ կետը՝ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով հանձնաժողովը որոշեց <<ՔՆ-ԲՀԱՀԾՁԲ-15/42>> ծածկագրով բանակցային ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող Մասնակից հայտարարել <<Արման-Թաման>> ՍՊԸ -ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

6. <<ՔՆ-ԲՀԱՀԾՁԲ-15/42>> ծածկագրով բանակցային ընթացակարգի բացման նիստը ընդհատելու մասին

(Ա. Սարգսյանց)

6.1. Գնահատող հանձնաժողովի սույն նիստն ընդհատել մինչև <<ՔՆ-ԲՀԱՀԾՁԲ-15/42>> ծածկագրով գնման գործընթացի հրավերի 5.3 կետով նախատեսվող հարցման (ժամկետանց հարկային պարտավորությունների մասին) պատասխանի ստացման հաջորդ օրվա ժամը 11:00-ն, բայց ոչ ուշ քան 22.12.2015 թ. ժամը 11:00-ն,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Ա. Սարգսյանց

Անդամներ՝ Ա.Քոչարյան

Մ. Սարգսյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան